

**ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 25/4**

**20 սեպտեմբերի 2016թ.**

Քննարկվեց քաղաքացի Արմինե Մարդոյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 29.07.2016թ. թիվ 1226/01 որոշման դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետը, քննարկելով քաղաքացի Արմինե Մարդոյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 08.07.2016թ. դրությամբ նրա ԱԱՀ-ի գծով չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 9.194.068 դրամ, որից հարկ 3.609.055 դրամ, տույժ 1.975.958 դրամ և տուգանք 3.609.055 դրամ: Նշված պարտավորություններն առաջացել են ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ-ում և տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա կազմված ժամկետանց հարկային պարտավորությունների հաշվարկը:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի կողմից 29.07.2016թ-ին ընդունվել է թիվ 1226/01 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում) Արմինե Մարդոյանից 9.194.068 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Գործում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ գանգատի վերաբերյալ իրավաչափ որոշում կայացնելու համար անհրաժեշտ է հարցում կատարել համապատասխան լիազոր մարմին՝ պարզաբանման ենթակա որոշ հարցերի վերաբերյալ դիրքորոշում ստանալու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

Արմինե Մարդոյանի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեղական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**